ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆ

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՀԻՇԱՏԱԿՆԵՐ

Սեպտեմբերի 27, կիրակի։ Ս. Էջմիածին կգտնվիմ։ Տաճարին խորհրդասքող կամարներուն ներքև աստվածային պաշտամունք կկատարվի։ Հավատացյալներու հոծ բազմություն մը լեցուցած է հինավուրց Կաթողիկեն։ Իսկ դուրսը՝ ընդարձակ բակը և պարտեզները նույնպես կհորդին ժողովուրդով։ Բարձր ծառերուն շուքին ներքև, բակի սալահատակին վրա և կաթողիկոսներու դամբարանին մոտ ուխտավորներ զվարթորեն շուրջպար կդառնան։ Տեղ-տեղ երիտասարդներ խմբված եռանդագին ծափ կզարնեն դինիին արբշիռ կայտառողներուն։ Մամիկներ մատաղ կպատրաստեն, ու շարաճճի փոքրիկներ դեռ չեփած զայն կճաշակեն։ Երգ ու պարերգ, ծափ ու ծափողջույն, սրինդ, թառ ու թմբուկ կթնդացնեն մթնոլորտը։

Հայ ժողովուրդը իր ցնծատոնը կապրի։

Ամենայն Հայոց Հայրապետի անվանակոչության տոնախմբությունն է։

Բայց ես ինծի հարց կուտամ. «Կրոնական ցնծերգին հետ, ինչո՞ւ աշխարհիկ խրախճանքը ժողովուրդին։ Ու ատոր պատասխանը. «Վանքումը մկրտում են, վանքումը պսակում են, վանքումը թաղում են, վանքումը քեֆ են անում, վանքումը լաց են լինում. վանքն է նրանց ամբողջական կյանքի արտահայտիչը»։

Կհնչեն Տաճարին զանգակները քաղցր ներդաշնակությամբ։ Պարերը կդադրին ու աշխարհախումբ բազմությունը կհորդի դեպի Վեհարանի դուռը։ Ժողովուրդի ալիքը հետզհետե կաճի՞, կուտի՞...։

«Վեհափառ Հայրապետը եկեղեցի է իջնում»։

Վեհարանի դռնեն մինչև իր Աթոռը՝ քարընկեց մը միայն. երկու րոպէ կբալե կտրելու այդ միջոցը. բայց... շիք անցք։ Խռնված են հավատացյալները. ոմանք, ծառերուն վրա բարձրացած, ոմանք պատշգամներու և աստիճաններու. իսկ ոմանք ալ ծունկի եկած են, ու ինչպիսի՞ հոգեկան երանության մեջ պիտի ըլլան, եթե իրենց շրթունքները կըրնան հպեցնել Սրբազան Հայրապետի փեշերուն։ Շնորհազարդ Վեհը նոր վերադարձած է օդափոխութենեն. Հայոց աշխարհի հավատացյալները երկու ամիսե ի վեր կարոտով կսպասեն իր օրհնենքին։ Ու հիմա հոս է ան. եկեղեցի կիջնէ. պետք է մոտենալ անոր, համբուրել իր Ս. Աջը, փեշերը։ Հավատացյալներ ավելի կխռնվին, ավելի կկուտակվին։ Իզուր եկեղեցականներ և շաթիրներ կջանան ճանապարհ բանալ։ Ո՞վ կարող է արգիլել ժողովուրդի զեղուն հավատքին հորդումը։ Ու ձայներ շրթներեն օդին մեջ.

— Երկա՞ր կյանք մեր ալեփառ Հայրապետին։

— Հոգո՞ւդ մեռնեմ, Վեհափա՛ռ։

— Թողե՛ք ինձ, նրա օրհնությունը ստանամ։

— Բաքվից եմ եկել, ուզում եմ նրա Աջը համբուրել։

Ու ամբոխը ծով է կոհականման։

Բոպեները կսահին... վերջապես կհասնինք Տաճար։ Վեհը կբաղմի իր Աթոռին վրա։

Կշարունակվի հայոց սուրբ պատարագը։ Հազիվ մատուցող և դպիրք կարող են զիրար լսել։ Հսկա Տաճարը խռնված է ամեն հասակի հավատացյալներով. շարժելիք տեղ չկա։ Ոմանց շրթներեն մաղթանք ու աղոթք կբարձրանան առ Աստված, ոմանց՝ երգ։ Ոմանք կաշխատին ճամբա բանալ, որպեսզի մոտենան Հայրապետական Աթոռին՝ Նորին Ս. Օծության օրհնությունը ընդունելու։ Իսկ երեխաներու կանչը, դպրաց օրհներգության հետ, խորհրդավոր Վեհավայրին մեջ կստեղծե աններդաշնակություն մը, որ ինձ համար այդ պահուն կհանդիսանա դերագույն ներ-

դաշնակութիւնը, որովհետև երեխայեն մինչև ծերունին, իր ապրումին համաձայն, իր Հայրապետին առաջ և իր հայրապետներու ոգեղեն ներկայութեան մեջ, կաղոթեն Ամենակալ Հոր։

պատվանդանին երկարած, որպեսզի ուխտավորները համբուրեն։ Բայց անոնք կխուժեն ուժգնորեն...։ Այդ պահուն ահա հանկարծ քանի մը երիտասարդներ, եկեղեցականներու և շաթիրներու օգնութեամբ, կճեղքեն հավա-

Գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը
Երևանի Կոնդի Ս. Հովհաննես եկեղեցում, պատարագից հետո։

Աստվածային պաշտամունքը կավարտի։ Վեհը հազիվ իր օրհնութիւնը տված հավատացյալներուն, ահա հորդաձեղ խուժում մը իր անձին վրա։ Եկեղեցականներու օգնութեամբ Վեհը կբաղմի Հայրապետական գահին վրա, ձեռքերը անոր ամպհովանիին

տացյալներու կոտակվող բազմութիւնն ու Տաճարի հյուսիսային դռնեն Վեհարան կառաջնորդեն Հայրապետը։

Հավատքի նման պոռթկման ժողովուրդի կողմե քիչ անդամ ականատես եղած եմ։ Դուրս կելլեմ Վեհարանեն, որուն արտաքին

դան մուտքին առջև հավատացյալներու հոծ բազմություն մը, ամեն սեռ և տարիքե, անասելի ջերմեռանդ զգացումով մը, կսպասե, որ ներս մտնե Վեհին օրհնությունը ստանալու։ Մինչ կուղղվիմ դեպի Տաճար, բազմության մեջեն մեկը, կարծելով, որ Էջմիածնի միաբաններեն եմ, թախանձագին կխնդրե ինձմե, որ Վեհարան առաջնորդեմ զինք, որպեսզի Սրբազնագույն Հայրապետին Աջը համբուրե։

— Նոր-Նախիջևանից եմ եկել, խնդրում եմ։

— Ի՞նչ անեմ, ես էլ Կիլիկիայից եմ եկել,— կըսեմ ու կմտնեմ Կաթողիկեեն ներս։

***

Մկրտության խորհուրդը կկատարվի։ Քահանա մը հազիվ ատեն կունենա երեխաները ջուրին մեջ ընկղմելու, ուրիշ մը՝ զանոնք մյուռոնելու, իսկ երրորդ մը՝ Ս. Հաղորդություն տալու։

Ու Վեհավայրեն ներս ամեն կողմ ձայներ...

— Տեր հա՛յր, հեռու տեղից եմ եկել, նախ ի՛մ երեխայիս մկրտիր։

— Ավտոն սպասում է, տեր հա՛յր, պետք է գնամ, մյուռոն քսիր երեխայիս։

— Մի՛ լա, բալա ջա՛ն, սպասի՛ր։

Քահանաներ հոգնած են. քրտինքը կհոսի իրենց ճակատներեն շուրջառներուն վրա։ Ու երկարորեն կշարունակվի այդ սրբազան գործողությունը։

Այդ օր Ս. Էջմիածնի Տաճարին մեջ 230 մկրտություն տեղի ունեցավ։

***

Ավագ սեղանի բեմին վրա երկու եկեղեցական ծնրադրած են. երկուքն ալ պարտասած երևույթ մը ունին։ Փրկչին Ս. Մարմինեն ու Արյունեն կհաղորդեն ժողովուրդը։ Սրբության ճաշակումը պատարագի վերջավորության սկսած է. մոտ երկու ժամ անցեր է, ու դեռ սրբագործված հացն ու գինին կմատակարարվին հայ հավատացյալներուն։ Կհատնի սրբությունը, բայց ո՛չ՝ զայն ճաշակողները։ Հայ հոգիներ հավերժական կաթողիկեին մեջ հավերժը կընդունին, հավերժին հետ ապրելու։

Տաճարին կեդրոնը Իշման սեղանն է, Աստվածորդվույն իջած տեղը. խաչ ու Ավետարան դրված են հոն. ուխտավորներ ծնրադիր կհամբուրեն զանոնք։ Մեկուսի, կդիտեմ հավատացյալներու շարանը. ոմանք ծնրագնաց կմոտենան, ոմանք ձեռքերնին բազկատարած և աչքերնին գմբեթին հառած, իջնող լույսին բացած են իրենց հոգին։ Ոմանք կարտասվեն, իսկ ոմանց դեմքին վրա ալ ժպիտը անպակաս է։ Տարեցներ և երեխաներու ձեռքեն բռնած են։ Ու այդ երեխաները, կզարմանամ, ի՞նչ աշխուժով կհամբուրեն խաչն ու Ավետարանը։ Բազմությունը կհորդի. ոմանք կարգի սպասելու ժամանակ չունին, կհրմշտկեն, բայց իզուր. ու ճարահատ, սեղանին սյուները համբուրելով կմեկնին։ Ոմանք ոտաբոբիկ կմոտենան Սրբությունն Սրբոցին։

Սքանչացած, կդիտեմ հայ ժողովուրդը, որ Ս. Էջմիածնի Տաճարին մեջ կաղոթե, Սրբազան Խորհուրդով կհաղորդվի, իր հայրերուն հոգիովը կվերապրի։

Տե՛ր, Դուն անսասան պահե այդ հոգին, այդ ժողովուրդը, այդ Կաթողիկեն իր ալեզարդ Գահակալով։